«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 8

24.03.2021թ.

1. **Համալսարանի ստորաբաժանումներում 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման վերաբերյալ.**

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

1.1. 2020թ պատերազմի մասնակից, վիրավորում ստացած, վերականգնողական փուլում գտնվող կամ պատերազմական գործողություններին որևէ առնչություն ունեցող (զոհված, անհայտ կորած, գերեվարված ընտանիքի անդամ կամ հարազատ ունեցող), քննաշրջանի ընթացքում COVID-19-ով հիվանդացած ուսանողներին (ցերեկային և հեռակա ուսուցման համակարգերում)՝ համապա-տասխան փաստաթղթերի առկայության դեպքում, մինչև ս.թ. ապրիլի 2-ը տալ առարկայական պարտքերի հանձնման ևս մեկ հնարավորություն:

1.2. Մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքեր ունեցող, վերը նշված տարակարգերին չպատկանող ուսանողներին առարկա-յական պարտքերով տեղափոխել 2020-2021թ երկրորդ կիսամյակ:

1.3. 12 կրեդիտից ավելի առարկայական պարտքեր ունեցող, վերը նշված տարակարգերին չպատկանող ուսանողներին հեռացնել համալսարանից, կամ, իրենց դիմումների համաձայն, տեղափոխել հեռակա ուսուցման համակարգ:

1.4. Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, դեկաններին՝ առարկայական պարտքեր ունեցող ուսանողների համար կազմակերպել դասընթացներ՝ սահմանված կարգի համաձայն:

2. Հեռակա ուսուցման դեպարտամենտում և համալսարանի մասնաճյուղերում 2019-2020 ուս. տարվա քննաշրջանի արդյունքների ամփոփման և առկա խնդիրների վերաբերյալ.

2.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ գերեվարված և անհայտ կորած ուսանողների վերաբերյալ ստեղծել համապատասխան փաստաթղթային փաթեթներ: Գերիների հարցով գրությամբ դիմել ՀՀ ՊՆ, իսկ անհայտ կորած ուսանողների հարցով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և, պատասխան ստանալուն պես, լուծում տալ հարցին:

2.2. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի 2020թ պատերազմի մասնակից, վիրավորում ստացած, վերականգնողական փուլում գտնվող կամ պատերազմական գործողություններին առնչություն ունեցող (զոհված, անհայտ կորած, գերեվարված ընտանիքի անդամ կամ հարազատ ունեցող), քննաշրջանի ընթացքում COVID-19-ով հիվանդացած ուսանողներին՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, մինչև ս.թ. ապրիլի 2-ը տալ առարկայական պարտքերի հանձնման ևս մեկ հնարավորություն:

2.3. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքեր ունեցող ուսանողներին առարկայական պարտքերով փոխադրել 2020-2021թ ուս. տարի:

2.4. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի 12 կրեդիտից ավելի առարկայական պարտքեր ունեցող, վերը նշված տարակարգերին չպատկանող ուսանողներին հեռացնել համալսարանից:

2.5. Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին՝ 2020թ պատերազմի մասնակից հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին՝ ուսման վարձավճարի պարտքերով, պարտավորագրերով հաջորդ կուրս փոխադրելու հարցը քննարկել իրավաբանի հետ, ձևակերպել գրություն և դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

3. 2020-2021 ուս. տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձավճարների զեղչերի սահմանման վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

3.1. Հաստատել ռեկտորատի քննարկմանը ներկայացված ՀԱԱՀ տարբեր ստորաբաժանումների ուսանողների ուսման վարձավճարի զեղչերը (հրամանները կցվում են):

3.2. Հանձնարարել ՈՒԳԿ վարչությանը, դեկաններին, գլխավոր հաշվապահին՝ համեմատել 2020-2021 ուս. տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում ուսման վարձավճարի զեղչերի ցուցակներում ընդգրկված ուսանողների տվյալները, պարզել կրկնությունները և այդ թիվը հանել ուսանողների համակազմի 10%-ից ավելի զեղչեր սահմանված ուսանողների թվից:

Հ/հ	Տարակարգը	Զեղչի տոկոսը	ԱԲԱՖ	ԱՖ	ՊՏՖ	ԱՃՖ	ԱՏՖ	Ագրոբիզնեսի դեպարտ.	ՀՈՒԴ	Սիսիանի մասնաճյուղ	Վանաձորի մասնաճյուղ	Ա.Ե. Քոչինյանի անվ. թուղթ	**Ընդամենը համալսարանում**
1	Ապրիլյանի ժամանակ մարտական գործող.մասնակից	50	2	1	4	5	5	-	-	6	2	-	**25**
2	Ապրիլյանի ժամանակ մարտական հերթապահ. իրականացրած	30	1	-	5	6	1	-	-	-	-	-	**13**
3	Մարտական հերթապահություն իրականացրած	30	1	-	1	5	2	-	2	2	3	-	**16**
4	Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող	50	2	-	-	-	2	-	1	-	1	-	**6**

5	23 տարին չլրա-ցած միակողմանի ծնողազուրկ	50	-	-	3	3	6	1	1	-	1	-	**15**
6	Սոց. անապահո-վության միավորից բարձր միավոր ունեցող	30	1	-	-	-	-	-	-	-	-	4	**5**
7	Սոց. անապահ. միավորից ցածր միավոր ունեցող	20	-	-	-	-	1	-	-	-	-	-	**1**
8	Բարձր առաջադի-մություն ունեցող	20	15	11	21	9	38	10	13	1	-	-	**118**
9	Երկու և ավելի անչափ. երեխա, ինչպես նաև տա-նից երկու և ավելի ուսանող ունեց.	30	-	4	6	6	10	-	3	3	2	12	**46**
10	Հաշմանդամ ծնող ունեցող	20	1	1	-	-	-	-	-	-	-	-	**2**
11	Զինվորական հաշմանդամ ծնող ունեցող	30	-	-	2	-	-	-	1	-	-	-	**3**
Ընդամենը			**23**	**17**	**42**	**34**	**65**	**11**	**21**	**12**	**9**	**16**	**250**

4. Հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողների ուսման վարձավճարի զեղչերի սահմանման հարցի վերաբերյալ.

4.1. Ընդունել ի գիտություն:

4.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին ներկայացնել պատերազմի հետևանքով ֆինանսական ծանր վիճակում հայտն-ված, տարբեր պարգևների արժանացած ուսանողների ցուցակները:

5. 2016թ ապրիլյան քառօրյա և 2020թ պատերազմների մասնակից ՀՈՒԴ 6-րդ կուրսի ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի վերաբերյալ.

Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին՝ 2016թ ապրիլյան քառօրյա և 2020թ պատերազմների մասնակից ՀՈՒԴ բոլոր ուսանողներին հանել ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցության, քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացնելու համար զեղչերի սահմանման ցուցակներից:

6. Համալսարանի ավարտական կուրսերի 2019-2020 և 2020-2021 ուս տարվա (առկա և հեռակա) ուսանողների ուսման վարձավճարների սահմանման հարցի վերաբերյալ.

6.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2019-2020 և 2020-2021 ուս. տարվա ավարտական կուրսերի ուսանողների ուսման վարձավճարը սահմանել տարեկան ուսման վարձավճարի 50%-ի չափով:

6.2. Առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերում, որոնց ուսումնառության ժամկետը 4 տարի 8 ամիս է 2019-2020 և 2020-2021 ուս տարվա երկրորդ կիսամյակի վարձավճարը սահմանել 20%-ով պակաս:

6.3 2020 թվականի փետրվարի 20-ի ռեկտորատի նիստի որոշման (արձանագրություն 5) 9-րդ կետը չեղյալ համարել և առաջնորդվել սույն արձանագրության 6.2 կետով:

6.4. 2019 թվականի դեկտեմբերի 17-ի ռեկտորատի նիստի որոշման (արձանագրություն 3) 7-րդ կետը չեղյալ համարել և առաջնորդվել սույն արձանագրության 6.1 կետով:

6.5. Հիմք ընդունելով սույն որոշումը, նախկինում տրված ավարտական կուրսերի վարձավճարների հրամանները ներկայացնել ամփոփ տեսքով:

7. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանի հաղորդումը՝ հայցորդ Մետաքսյա Հովնանի Ավետիսյանի կողմից 5 տարվա ծրագիրը 1 տարվա ընթացքում կատարելու արդյունքում՝ ուսման վարձավճարի վճարման, հայցորդության փաստաթղթերի ձևակերպումների խնդիրների վերաբերյալ.

Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, ԱՃ ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանին՝ իրավաբանի և գլխավոր հաշվապահի հետ ստուգել հիմքերը, քննարկել հարցը և կայացնել համապատասխան որոշում:

8. Գարնանային ածակուրդների, COCID-19-ի համաճարակային իավիճակի, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ.

8.1. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին, ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին և դեկաններին.

- սեղմ ժամկետում իրականացնել Moodle հարթակում տեղադրված նյութերի աուդիտ,

- սեղմ ժամկետում բացահայտել համալսարանի էլեկտրոնային կառավարման e-Buh համակարգում առկա թերությունները, տալ համապատասխան լուծումներ, վերացնել տեղեկագրերի լրացման հետ կապած աշխատակիցների թերացումները,

- կազմել թեստային քննությունների հսկիչների ցուցակներ, կազմակերպել վերապատրաստումներ:

8.2. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ իրականացնել համալսարանի էլեկտրոնային համակարգերի, հարթակների աշխատանքի ստուգում, տալ կարգավորումներ, ինչպես նաև կենտրոնի կողմից կազմվող ուղեցույցը տրամադրել համալսարանի բոլոր ստորաբաժանումներին ու վերահսկել աշխատանքների կատարումը:

8.3. Հանձնարարել դեկաններին, ամբիոնի վարիչներին՝ ակտիվացնել ուսանողների մասնակցությունն ՈՒԳԸ աշխատանքներին, ինչպես նաև ամբիոնի

աշխատակիցներին տեղեկացնել SS կենտրոնի կողմից Zoom հարթակով կազմակերպվող հանդիպումների մասին:

8.4. Հանձնարարել դեկաններին.

- կազմակերպել ուսանողների այցելություններ ՈՒՓՏ-ներ՝ Նալբանդյան, Ոսկեհատ և այլն,

- մշակել գարնանային արձակուրդների ընթացքում 3-րդ և 4-րդ կուրսերի բաց թողնված դասերի լրացումների կարգ:

9. ՀԱԱՀ գործընկեր ԳԴ Վայնշտեֆանի համալսարանում ուսումնառող և վերադարձող ուսանողների ուսումնական գործընթացում առկա խնդիրների վերաբերյալ.

9.1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին, միջազգային կապերի և կրթական բարեփո¬խումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին, ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին՝ իրավաբանի հետ քննարկել հարցը և տալ համապատասխան լուծում:

9.2. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրա-րային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի ուս. պլաններում կատարել կիսամյակների տեղափոխում: Ընդունել ԳԴՀ Վայնշտեֆանի ԿԳՀ-ից Ալբերտ Ռուսլանի Զատիկյանի, Անի Վահրամի Թամազյանի և Ռիմա Ավետիքի Նազարյանի բերած առարկայական և գիտաարտադրական պրակտիկայի կրեդիտները և թույլատրել ուսումը շարունակել ԱՏ ֆակուլտետի նույն մասնագիտության «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 2020-2021 ուս. տարվա առաջին կուրսի երկրորդ կիսամյակից՝ ներառելով ձեռնարկութ¬յունների պլանավորում առարկան և չորրորդ կիսամյակի բոլոր առարկաները:

9.3. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրա-տուրայի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 2019-2020 ուստարվա առաջին կուրսի մագիստրանտներ Շուշան Գևորգի Մախսուդյանի և Անի Գևորգի Մախսուդյանի գործուղման ժամկետը երկարացնել 15.03.2021թ. մինչև 30.04.2021թ.՝ ԳԴՀ Վայհենշտեֆանի անվան կիրառական գիտությունների համալսա-րանի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրում ուսումը շարունակելու կապակցությամբ:

10. Համալսարանի ավարտական կուրսի ուսանողների՝ կարմիր դիպլոմի հավակնելու համար, մեկ առարկայի գնահատականի վերահանձնման հնարավորություն ընձեռելու վերաբերյալ.

Գործել սահմանված կարգի համաձայն:

11. COVID-19-ի համավարակի պայմաններում ՀՀ-ից դուրս գտնվող ՀԱԱՀ ուսանողներին՝ քննություններն ու դիպլոմային աշխատանքի պաշտպանությունն առցանց կազմակերպելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ.

11.1. Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին, դեկաններին, ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին, մասնաճյուղերի տնօրեններին.

- միջազգային տարբեր ծրագրերով արտերկիր մեկնել պատրաստ-վող ՀԱԱՀ ավարտական կուրսերի (ցերեկային և հեռակա ուսուցման) ուսանողների (մագիստրանտների) դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը կազմակերպել նախապես՝ ապահովելով համապատասխան փաստաթղթավորումը,

- ՀԱԱՀ ավարտական կուրսերի ուսանողների դիպլոմային աշխատանքների պաշտպանությունն առցանց կազմակերպելու նպատակով, յուրաքանչյուր կոնկրետ ուսանողի համար կազմակերպել անհատական քննարկում՝ ապահովելով համապատասխան փաստաթղթավորումը:

12. ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում քննություններն առցանց կազմակերպելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում քննությունները կազմակերպել տեղում:

13. COVID-19-ի համավարակի տարածման տեմպերի սահմանափակման նպատակով կազմակերպչական որոշ հարցերի վերաբերյալ.

Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին.

- յուրաքանչյուր շաբաթվա ավարտին ստորաբաժանումում արձանագրված COVID դեպքերի, թեստերի դրական պատասխանների, աշխատանքից բացակայողների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը փոխանցել համալսարանի բժշկուհուն,

- կորոնավիրուսի հաստատված դեպքերի, այլ հիվանդությունների դեպքում աշխատանքից բացակայելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել անաշխատունակության թերթիկ:

14. ՀԱԱՀ-ի «Հիշատակարան» կայքի տվյալների վերաբերյալ.

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ 2020թ պատերազմի ընթացքում զոհված, վիրավորում ստացած, գերեվարված, անհայտ կորած ՀԱԱՀ ուսանողների մասին ողջ տեղեկատվությունը փոխանցել ՏՏ կենտրոնին:

15. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից 4 տարի ժամկետով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինստիտուցիոնալ վերահավատարմագրման վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ